ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ԱՅՍ ԱՆՍՈՎՈՐ ՈՒ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՌԱՖԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ...

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՐԾԱՐԱՐԻ ՀԵՏ

***- Անկեղծ ասած, Ձեզ հետ զրուցելիս, մեր կողմից լռելն ավելի ճիշտ կլիներ, բայց, քանի որ մենք մարդիկ ենք եւ ոչ թե տելեպատներ, ստիպված ենք հարցեր տալ: Իսկ թե ինչո՞ւ լռել, բացատրեմ: Երբ Դուք պատմում եք ինչ-որ բան, հետաքրքիր մեջբերումներ եք անում նշանավոր գրողներից... Կամ ասենք ինչ-որ մեկը երգում է հայկական կամ վրացական երգ...Դուք անմիջապես մեջբերումներից բացի, խոսքերի հեղինակի, երգահանի անունն եք տալիս... Շարունակե՞մ...***

- Չէ', կարիք չկա: Ոչ մի անսովոր բան դրանում չկա: Միջնակարգ կրթությամբ մարդն էլ կարող է այդպիսին լինել: Բայց ահա, եթե մարդն ունի բարձրագույն կրթություն, դա ամենեւին էլ զարմանալի չէ: Չպիտի զարմանալ: Այս առումով մի բան կասեմ միայն. մարդիկ մի տեսակ ետ են սովորել լռությունից, մանավանդ այն դեպքում, երբ պետք է ոչինչ չասել, այլ ընդամենը լռել, որպեսզի որեւէ բան ասելով չփչացնենք ոչինչ...

***- Ուրեմն, եկեք ներկայացնենք Ձեզ, այսպես ասած, բոլոր լավ ու վատ կողմերով, եւ Դուք ասեք այն, ինչը կօգնի մեր ընթերցողին ավելի մոտիկից ճանաչել Ձեզ, ում շատ լավ ճանաչում են Թբիլիսիում եւ, իհարկե, վիրահայ համայնքում...***

- Համոզեցիք...

***- Եվ այսպես՝ առաջին հարցը... Ո՞վ է Ռաֆիկ Աղաջանյանը...***

- Մարդ իր մասին ինքը չպիտի խոսի, բայց եթե դա շատ է պետք, ապա կասեմ: Նախ բարի մարդ է նա: Եվ ապա շատ անհաշտ անարդարության հետ: Ու երրորդը՝ իմ մեջ շա՜տ-շատ է սիրո չափաբաժինը: Սիրում եմ այն, ինչ անում եմ: Չորրորդն էլ... չգիտեմ: Իհարկե, կա ինչ-որ բան, որն ինձ չի գոհացնում, բայց այդ մասին դեռ չեմ ասի: Ես միշտ ինքնավերլուծումներ եմ անում, վերուդիր անում գործերս, արարքներս ու երբեք չեմ զբաղվում ինքնասիրահարվածությամբ, նարցիս չեմ... Ցանկացած մարդ, ով ինձ ճանաչում է, գիտի, որ ես հեռու եմ ինքնագովազդից...

***- Որտեղի՞ց են սկզբնավորվում շրջապատում հայտնի իսկական թբիլիսցի Ռաֆիկ Աղաջանյանի արմատները...***

- Իմ պապերի պատմածներից գիտեմ, որ մենք էրզրումցի հայեր ենք, որ 1829-1830թթ. ռուս գեներալ Պասկեւիչը ասել է մեր նախնիներին՝ ռուսներն այստեղից գնում են, եւ ձեր այստեղ մնալը շատ է վտանգավոր... Ահա այդպես են իմ նախնիք հայտնվել դեռ Ախալցիխեում, այնուհետեւ Ախալքալաքիում, ապա՝ Ծալկայում ու վերջապես՝ Թիֆլիսում... Ու ես էլ ահա Թբիլիսիում արդեն մեր չորրորդ սերունդն եմ ներկայացնում...

***- Ի՞նչ էիք երազում դառնալ, երբ սովորում էիք դպրոցում...***

- Անկեղծ ասած, առանձնապես լավ չեմ սովորել (հայրս չէր էլ ուզում, որ գերազանցիկ լինեի), բայց «դվոիշնիկ» էլ չեմ եղել, ոչ էլ՝ միջակ սովորող... Մինչեւ ավարտական դասարան էլ նույնիսկ չէի մտածում, թե ի՞նչ եմ անելու դպրոցն ավարտելուց հետո... չգիտեի, թե ինչ եմ դառնալու... բարձրագույն հանձնե՞մ, թե՞ գործարան գնամ աշխատելու... Բայց փոխարենը շատ էի կարդում հայ դասականներին, հետո՝ վրաց դասականներին, հետո՝ Տոլստոյ, Դոստոեւսկի, Շեքսպիր, Բոդլեր... Սիրում էի լրագիր կարդալ (ի դեպ, մեր տանը սիրում էին կարդալ «Սովետական Վրաստան»), մինչեւ օրս կարդում եմ «Վրաստանը»... Մանավանդ, որ հիանալի ուսուցիչներ էին դասավանդում մեր դպրոցում: Մեր դպրոցն են ավարտել նույն դասարանցիներ, այժմ գրողներ Անահիտ Բոստանջյանը, Գուրգեն Խանջյանը... Հայկական այս անվանի կրթօջախը՝ Հովհ.Թումանյանի անվան թիվ 34 դպրոցը, գտնվում էր նախկին Սովետսկայա փողոցում, փառավոր Ներսիսյան դպրոցին շատ մոտ, մեր տունն էլ գտնվում էր Կալինինի փողոցում (այժմ՝ Ջավախիշվիլի)... Ավարտական հանդեսին մեր ուսմասվարը հետաքրքրվեց, թե ով որտեղ է ուզում ընդունվել: Ինձ երեւի «մոռացավ»՝ չհարցրեց կամ էլ համոզված էր, որ ոչ մի տեղ չեմ հանձնելու... Իսկ ես մեկնեցի Մոսկվա, ընդունվեցի իրավաբանական ու դարձա դիպլոմով իրավաբան: Մի խոսքով, ենթագիտակցորեն ընտրեցի այնպիսի մասնագիտություն, որը կարող է օգնել ցանկացած մասնագիտության տեր մարդու ցանկացած պետական սիստեմում... Գալով բիզնեսի ոլորտ՝ անմիջապես կողմնորոշվեցի, որ առանց տնտեսագիտական իմացության, անհնար է զբաղվել դրանով: Ու սկսեցի զբաղվել ինքնակրթությամբ... Սրան գումարվեց եւ գործնական փորձառությունս: Ահա եւ իմ համալսարանները...

***- Ի՞նչն եք համարում կարեւոր մարդու կյանքում, մարդու համար...***

- Ինքներդ դատեք. ինձ երբեք ոչ ոք բաց գրքի նման չի ասել, թե ինչն է լավ ու ինչը՝ վատ: Ես դա ինքզինքս եմ հասկացել, ներքուստ, բնազդով: Մեր ընտանիքում գլխավոր արժեքներն ինձ համար միշտ եղել են աստվածաշնչյան, ոչ, ավելի ճիշտ՝ ավետարանչական՝ լավ չէ խաբել, լավ չէ լինել մատնիչ. լավ չէ «բախել», գողանալը լավ բան չէ, վիրավորելը լավ բան չէ... Իհարկե, քիչ են մարդիկ, որոնք իրենց ամբողջ կյանքի ընթացքում պահպանում են այս պատվիրանները, բայց հո ջանո՞ւմ են մարդիկ... Ես ծայրահեղորեն հազվադեպ եմ խախտում դրանք... Եվ ասեմ պարզ. նման խախտում, որի մասին հիմա կարող եմ լրջորեն ասել՝ չկա, չունեմ, չեմ հիշում:

***- Հետաքրքիր է, ովքե՞ր են Ձեր ընկեր-բարեկամները...***

- Ցանկացած մարդ ընկեր-բարեկամներ ունի: Իմ մերձակա շրջապատը բաղկացած է երկու խմբի մեջ դասակարգվող մարդկանցից: Առաջինները նրանք են, ում հետ ես կապված եմ աշխատանքի բերումով: Ասեմ, որ աշխատանքն ինքս եմ ընտրում, ինձ ոչ ոք զոռով չի պարտադրում, հետեւաբար չկան մարդիկ, ովքեր ինձ հաճելի չեն կամ, ում հանդեպ ես անտարբեր եմ... Ինչ վերաբերում է երկրորդ խմբին, այդ բարեկամներս ինձ միշտ զարմացրել են ովքեր իրենց գործի մեջ գրեթե կատարյալ են: Դրանք ե'ւ գրականության ու արվեստի մարդիկ են, ե'ւ գիտնականներ, քաղաքական գործիչներ, ե'ւ իհարկե իմ դպրոցական ընկերները, որոնց մեջ կան նաեւ հասարակ, շարքային արհեստավորներ...

***- Դուք հավատացյալ մարդ եք, Ձեզ հաճախ են տեսնում եկեղեցում...***

- Այո, իհարկե... Լինում եմ եկեղեցական տոներին, կիրակնօրյա պատարագներին... Աստված ու հավատ հնարավորություն են տալիս ինձ լսել ձայներ Վերից: Աստված կա, ու ես հավատում եմ Աստծուն: Բայց ինչպիսին է նրա տեսքը, ոչ ոք չի ասում... Ես մոլի հավատացյալ չեմ, ու ոչ էլ զարգացած ու կրթված՝ կրոնի ու դավանանքի ուսումնասիրության առումով: Ես ուղղակի արդարության մոլի կողմնակից եմ ու հավատում եմ արդարությանը, պատվիրաններին՝ մի' խաբիր, օգնի'ր կարիքավորին եւ ընչազուրկին... Հայրս առաջնորդվում էր այս սկզբունքով՝ բարի գործերն արվում են ոչ թե այն պատճառով, որ դու որոշել ես դրանք անել, այլ, որ դա քո սրտի կանչն է... Ու ես հավատացած եմ, ու տատիս խոսքերից էլ գիտեմ, որ Բարձրյալը միշտ բարի գործեր է անում ու օգնում հատկապես ընչազուրկներին: Մի խոսքով, ես երբեք չեմ ապրել առանց հավատի, թեեւ Աստծո հետ ես ունեմ անձնապես իմ, ինչ-որ ի'մ փոխհարաբերությունները...

***- Դրա համար էլ ձգտում եք օգնել նրան, ով կարիք ունի օգնության...***

- Հնարավորինը՝ այո...

***- Ի՞նչ են Ձեզ համար հայ-վրացական փոխհարաբերությունները...***

- Ինչ-որ շատ գերկարեւոր եւ գերանհրաժեշտ ու միշտ թարմ եւ նոր սնունդ... Բոլորիս համար, վրացիների ու Վրաստանի, հայերի ու Հայաստանի, վիրահայերիս, մի խոսքով ամբողջ Վրաստանի ու Հայաստանի... Ժամանակակից բարդ աշխարհում, աշխարհաքաղաքական արդի զարգացումների խաչմերուկներում մեր փոխհարաբերությունների գինն ու կարեւորությունը բազմակիորեն է աճում... Դարեր շարունակ Վրաստանը եւ Հայաստանը ենթարկվել են օտարերկրյա զավթիչների ավերումներին ու ավարումներին, սակայն շարունակել ենք ապրել, վերստին հառնել շնորհիվ այն բանի, որ միշտ միասին ենք եղել՝ ի հեճուկս մեր թշնամյաց: Ահա թե ինչու, մենք պարտավոր ենք մեր աչքի լույսի պես պահպանել այդ բարեկամությունը:



***- Վերջերս Թբիլիսիում լույս տեսավ վրաց ճանաչված պատմաբաններ, դոկտորներ Մամուկա Գոգիտիձեի եւ Գիորգի Բեժիտաշվիլու «Արմատներով վրաստանցի հայ գեներալներ» գիրքը, որը մի փոքր աղյուս է վրաց-հայկական հարաբերություններում եւ գրքի հովանավորը Դուք եք...***

- Այո, եւ նման գիրքը վրաց հեղինակների կողմից առաջինն է վերջին 25 տարիների ընթացքում: Այն լայն արձագանք առաջացրեց՝ ինչպես Վրաստանում, այնպես էլ Հայաստանում: Գիրքը լույս է տեսել վրացերենով եւ ռուսերենով:

***- Եվ Դուք դարձաք Վրաստանի գիտությունների բազմապրոֆիլային միջազգային ակադեմիայի ակադեմիկոս...***

- Ո'չ, ինձ ընտրեցին ակադեմիկոս՝ ակադեմիայի գիտական կոչումների հանձնաժողովի նիստում:

***- Բայց չէ՞ որ Դուք իրավաբան տնտեսագետ եք...***

- Որքանով տեղեկացված եմ, ինձ, երեւի, բացառություն են արել՝ հաշվի առնելով իմ համեստ ավանդը վրաց-հայկական հարաբերությունների զարգացման գործում:

***- Վրաստանում գրանցված է մոտ 150 հայկական ոչ կառավարական հասարակական կազմակերպություն: Ձեզ հաճախ են տեսնում դրանցից մի քանիսի կազմակերպած միջոցառումներին...***

- Դրանք հիմնականում համերգներ են, գրքերի շնորհանդեսներ, հանդիպումներ գրողների, հասարակական գործիչների հետ.. Ու դա շատ լավ է... Ես կարծում եմ, որ այդ հասարակական կազմակերպությունների գլխավոր նպատակը պիտի լինի եւ այն, որ տեղաբնակ հայերը հնարավորինս արագ ինտեգրվեն վրաց հասարակական կյանքին եւս...

***- Ինչպե՞ս...***

- Թբիլիսիում, ինչու չէ, նաեւ տարածաշրջաններում, այս կազմակերպությունները պիտի կազմակերպեն մշտական այցեր՝ թատրոններ, օպերա, համերգային սրահներ, թանգարաններ... Ցուցակը կարելի է շարունակել... Մեր դպրոցների աշակերտները բարեկամական կապերի մեջ պիտի լինեն վրացական դպրոցների աշակերտների հետ, հանդես գան համատեղ համերգներով, գիտական օլիմպիադաներ, մարզական մրցաշարեր կազմակերպեն, միասին մեկնեն Հայաստան, հյուրընկալեն իրենց հայաստանցի ընկերներին, հայաստանցիներին բերեն Վրաստան: Ի դեպ, իմ սովորելու տարիներին մեր դպրոցում, օրինակ, այս ամենը կազմակերպում էին դպրոցն ու իմ ծնողները, իսկ այսօր դրանով պիտի զբաղվեն հասարակական կազմակերպությունները:

***- Մի քանի օրից Ձեր ծննդյան տարեդարձն է: Ո՞ր ռեստորանում եք նշելու...***

- Պատկերացրեք, ծննդյանս օրը երբեք չեմ նշել ռեստորանում: Միշտ՝ տանը, հարազատներիս հետ, մորս, տանեցիների, ընկերներիս շատ փոքր շրջանակում... Եվ այն էլ՝ բավականին համեստ... Նույն կերպ էլ նշում ենք Ամանորը: Այս ավանդույթը մեր ընտանիքում հայրս է սկզբնավորել եւ շարունակվում է ցայսօր:

***- Ասում են, թե յուրաքանչյուր ձեռնարկատեր տառապում է անքնությունից... Ունե՞ք նման պրոբլեմ...***

- Վատ էին քնում, երբ դեռ այնքան էլ չէին հաշտվել հարկեր վճարելու հետ: Նման հիմնախնդիր առաջ էլ չեմ ունեցել: Լավ եմ քնում: Տեսնում եմ լավ, սիրուն երազներ: Ասում են՝ հարկերը վճարիր ու հանգիստ քնիր:

*Վ.ԱՐԱՔՍՅԱՆ*

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵՅԵՆԿՈ. «ՓՈՂ ՉՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ՄԱՐԴԻԿ ՉՊԵՏՔ Է ՄԵՌՆԵՆ»



***Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն տարեվերջին հանդես եկավ նախարարության երկամյա աշխատանքի արդյունքների հանրագումարմամբ:***

Նրա խոսքերով, փող չունենալու պատճառով մարդիկ չպետք է մեռնեն: «Իրականացված բարեփոխումները կառավարության ծառայությունն են: Կառավարությունը ջանք չխնայեց, որպեսզի Վրաստանի բոլոր քաղաքացիների համար առողջապահությունը դառնա մատչելի: Մարդիկ չպետք է մեռնեն միայն այն պատճառով, որ բուժման միջոցներ չունեն: Այսօր Վրաստանի բնակչության 100 տոկոսն ապահոված է բժշկական ապահովագրությամբ: Կառավարությունը հնարավոր ամեն ինչ արեց առողջապահության մատչելիության ապահովման համար: Բնականաբար, կան հիմնախնդիրներ, որոնց կարգավորման շուրջ մենք աշխատում ենք»,- հայտարարեց Դավիթ Սերգեյենկոն:

Նախարարի հավաստմամբ, առողջության համընդհանուր ապահովագրության կապակցությամբ ոչ մի լուրջ հիմնախնդիր չծագեց: «Մենք քննարկեցինք ծրագրի զարգացման հիմնական փուլերը եւ կանխագծեցինք առաջիկա նորամուծությունները: Համընդհանուր ապահովագրության ծրագիրը հաջողված է, եւ համոզված եմ, որ այն առաջիկայում կշարունակվի»,- ընդգծեց առողջապահության նախարարը:

Նշենք, որ, համընդհանուր ապահովագրության նախագծի շրջանակներում, 2014 թվականի նոյեմբերի 20-ի դրությամբ, առաջնային առողջապահության կենտրոններում գրանցվել է 2882238 քաղաքացի: Ընդհանուր առմամբ, վավերացվել է 822413 դիմում, որից 493145-ին ցուցաբերվել է անհետաձգելի բժշկական օգնություն, 62016-ին՝ ստացիոնար սպասարկում, 31598 քաղաքացիների ներկայացվել է քիմիական հորմոնայի եւ ճառագայթաթերապիա, անցկացվել է 71172 ծրագրված վիրահատություն, 2448 կարդիովիրահատություն եւ 60970 ծննդաբերություն:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵԾ ՊԱՏԻՎ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՄԵՐ ԱՄԵՆԱՄԵՐՁԱՎՈՐ ՀԱՐԵՎԱՆ ՈՒ ԱՄԵՆԱՄՏԵՐԻՄ ԲԱՐԵԿԱՄ ԵՐԿՐՈՒՄ»

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

Բարեբախտաբար, Վրաստանն այն պետությունն է, ուր ներդնում եւ զարգացնում են բոլոր այն օրենսդրական եւ ինստիտուցիոնալ հնարավորությունները, որոնք կոչված են պաշտպանելու մարդու իրավունքները: Հետեւապես, մեր խորհուրդներից մեկը կայանում է նրանում, որ Վրաստանի հայազգի քաղաքացիները պետք է տեղյակ լինեն իրենց շահերի ապահովման այն մեխանիզմներին, որ ընձեռված են Վրաստանի քաղաքացիներին՝ լինի դա օմբուդսմենի աշխատակազմը, կամ տարբեր իրավաբանական ինստիտուտները՝ այդ թվում հասարակական սկզբունքներով գործող այդ բնագավառի ոչ կառավարական կազմակերպությունները, ինչպես նաեւ դատարանը եւ այլն: Մի գուցե, բոլորին չէ, որ կարող է բավարարել այս խորհուրդը, սակայն ուզում եմ շեշտել, որ այդ է գլխավոր ճանապարհը, որը ժողովրդավարական երկրում թույլ է տալիս արդյունավետ կերպով լուծել քաղաքացիների խնդիրները՝ միաժամանակ քաջալերելով նրանց սոցիալական ակտիվությունը:

***- Վրաստանում Հայաստանի դեսպանությունն ունի բարի, լավ ավանդույթներ, որոնք ներդրվել են դեռեւս 20 տարի առաջ, երբ բացվեց հայկական դեսպանատունը եւ դրանք առ այսօր շարունակվում են: Մինչ Ձեր նշանակումը գործող դեսպաններն այդ ավանդույթները հնարավորինս ծառայեցնում էին երկու երկրների միջեւ տարբեր ոլորտներում հարաբերությունների ընդլայնման եւ խորացման համար: Մասնավորապես, դեսպանությունը միշտ ակտիվ դեր է կատարել երկու երկրների միջեւ քաղաքական, տնտեսական, մշակութային կապերի ամրապնդման ուղղությամբ: Առաջիկայում ի՞նչ եք ծրագրում իրականացնել այդ հարցում: Դիվանագիտական Ձեր գործունեության ընթացքում ի՞նչ նորամուծություններ եք մտադիր ներդնել վերոնշյալ նպատակներին հասնելու համար:***

- Կարող եմ միայն հաստատել այն գնահատականը, որ դուք տալիս եք Վրաստանում Հայաստանի դեսպանության տարիների ընթացքում ձեւավորված աշխատանքային ավանդույթներին: Ավելին, շնորհակալ եմ, որ դուք հիշատակում եք դա՝ ինձ էլ հնարավորություն տրամադրելով պատշաճը հատուցել այդ ավանդույթներին: Նշեմ նաեւ, որ այդ ավանդույթների նշանակալից մասը կազմում է դեսպանության անձնակազմի պատրաստվածության բարձր մակարդակը, ընդ որում դա վերաբերում է ինչպես դիվանագիտական, այնպես էլ՝ վարչատեխնիկական կազմին: Այն հուսալի նեցուկ է մեր աշխատանքում.


Յուրի Վարդանյանը տիկնոջ՝ Էլեոնորայի հետ

Ինչ վերաբերում է մեր առաջիկա ծրագրերին, ապա որոշակի նպատակահարմարություններից ելնելով, ընդունված չէ նախապես հրապարակայնորեն հայտնել տեղեկատվություն դեսպանության նախատեսված գործունեության վերաբերյալ: Սակայն, ի հարգանս «Վրաստան» թերթի ընթերցողների, ես փոքր-ինչ կխախտեմ այդ կարգը եւ, այնուամենայնիվ, կնշեմ, որ միտված եմ լուծելու Թբիլիսիում մեր դեսպանության շենքի դիրքի եւ հարմարավետության հարցը, որպեսզի այն առավել պիտանի լինի իր նշանակությամբ շահագործելու համար: Այդ հարցում ես արդեն ձեռք եմ բերել մեր երկրի նախագահի եւ կառավարության աջակցությունը, եւ հուսով եմ, որ 2015 թվականի ընթացքում այդ խնդիրը կլուծվի: Թեեւ մենք ունենք Թբիլիսիում դեսպանատուն, որը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է, սակայն այն ձեռք է բերվել 20 տարի առաջ եւ այլեւս չի բավարարում դիվանագիտական ներկայացուցչության շենքին ներկայացվող ժամանակակից պահանջներին ամենատարբեր տեսակետներից, այդ թվում, հաշվի առնելով հայ-վրացական հարաբերությունների զարգացման ներկա մակարդակը:

Ի դեպ, այստեղեւեթ ուզում եմ նշել, որ մեր պետությունների միջեւ հարաբերությունների որակի եւ ծավալի աճը հանգեցրել է այն բանի, որ 2014 թվականը դարձավ աննախադեպ տարի՝ հայ-վրացական ամենաբարձր մակարդակի փոխայցելությունների տեսակետից՝ մեր երկրների անկախության վերականգնման եւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ամբողջ տարեգրության մեջ: Կաշխատենք, որ դա էլ դառնա բարի ավանդույթ եւ զարգացում ստանա՝ տարածվելով ամենատարբեր ոլորտների վրա:

***- Ընդհանրապես, ինչպե՞ս է տեղի ունենում դեսպանի նշանակումը, դրանում ո՞ր չափորոշիչներն են համարվում վճռորոշ:***

- Հետաքրքիր հարց է: Անկեղծ ասած, այդ հարցն ինձ չէ, որ պետք է տրվի՝ նկատի առնելով, որ դեսպան նշանակելը պետության ղեկավարի արտոնությունն է: Որքանով որ, այնուամենայնիվ, ինձ եք դիմում այդ հարցով, ես կարող եմ միայն շարադրել իմ դիտարկումները: Ենթադրում եմ, որ դեսպան նշանակելու մասին որոշում ընդունելիս, երկրի առաջին դեմքը ղեկավարվում է այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են, օրինակ, թեկնածուի ճանաչվածությունը, որը պետք է օգնի վերջինիս գործնական կապեր հաստատելու նստավայր երկրում, պետական ծառայության նրա փորձը, պատասխանատվության գիտակցումը, մենեջերական ընդունակությունները, ինչպես նաեւ բազում այլ հանգամանքներ, կամ հանգամանքների միասնություն: Երեւի, դրանց թվում, վերջինը չէ նաեւ անձնական քաղաքական վստահությունն այն անձի նկատմամբ, ով օտար երկրում պետք է ներկայացնի պետությունը, եւ, ինչու ոչ, պետության ղեկավարին:

***- Վերջում ի՞նչ կցանկանայիք ասել «Վրաստան» թերթի ընթերցողներին, բոլոր վիրահայերին:***

- Ինձ մեծ պատիվ եւ պատասխանատվություն է բաժին ընկել՝ ներկայացնել հայոց պետությունը մի երկրում, որը մեր ժողովրդի գոյության ամբողջ պատմության ընթացքում հանդիսացել է, առանց որեւէ չափազանցության, մեր ամենամերձավոր հարեւանը եւ ամենամտերիմ բարեկամը, իսկ այժմ նաեւ գլխավոր գործընկերն է տարածաշրջանում: Դա նշանակում է, որ Հայաստանի հաջողությունները սերտորեն կապված են Վրաստանի հաջողությունների հետ:

Եվ քանի որ սույն հարցազրույցը տպագրվելու է Ամանորի տոներից անմիջապես հետո, եւս մեկ անգամ, իմ բարեմաղթանքները, նախեւառաջ, ուզում եմ հղել ամբողջ Վրաստանին, վիրահայ համայնքին եւ ձեր թերթի ընթերցողներին: Թո՛ղ այս Նոր տարին ձեզ համար լինի իսկական տոն, թո՛ղ 2015 թվականին ձեր կյանքը լի լինի սիրով, խնդությամբ, հաջողություններով ու ձեռքբերումներով:

***ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ***

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

# 60 ՏԱՐԻ՝ ՍԻՐՈՎ, ՀՈՒՅՍՈՎ ՈՒ ՀԱՎԱՏՈՎ

***Եսայի Աբովյանը դարձավ 60 տարեկան, եւ այսօր նա մեր ամանորյա հյուրն է:***



Եսային ավարտել է Թբիլիսիի Վանո Սարաջիշվիլու անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրի բաժինը: Դաշնակահար-ուսուցչի մասնագիտությամբ աշխատել է Գորիի երաժշտական ուսումնարանում, Թբիլիսիի 3-րդ երաժշտական դպրոցում, Մոսկվայի՝ Գլինկայի անվան դպրոցում եւ Ել.Գնեսինի անվան ինստիտուտում: Եղել է Թբիլիսիի պետական ֆիլհարմոնիայի մենակատար: Դասական երաժշտության՝ «Դաշնակահարների հանրապետական» (Վրաստան, 1984-85-86թթ.), «ԱՊՀ երկրների միջազգային» (Ռուսաստան, 1999թ.), «Մեկ ազգ, մեկ մշակույթ» (Հայաստան, 2006թ.) մրցույթների դափնեկիր է: Թբիլիսիի հանդիսատեսի համակրանքը նվաճել է մենահամերգների, ինչպես նաեւ համայնքի միջոցառումներին ունեցած ելույթների շնորհիվ:

Արդեն մեկ տարի՝ ղեկավարում է Վիրահայոց թեմի Առաջնորդարանի՝ Պատմա-մշակութային ժառանգության կենտրոնը, բայց, նախեւառաջ, նա մեր քաղաքի երաժշտական կյանքի անբաժանելի մասն է:

***- Եսայի, «Վրաստանի» ընթերցողների անունից շնորհավորում ենք Ձեր հոբելյանը, մաղթում քաջառողջություն, երջանկություն, ստեղծագործական բերկրանքներ: Եվ՝ մեր առաջին հարցը՝ ինչպե՞ս է Եսայի Աբովյանը բաժանվում 2014թ.-ից:***

- Շնորհակալություն՝ շնորհավորանքի համար: Ես, պետք է որ, գոհ լինեմ 2014-ից, քանի որ Հայոց Առաջնորդարանի՝ Պատմա-մշակութային ժառանգության կենտրոնում ունեցա մի գործ, որը ինձ շատ հաճելի է: Պատմությունը եւ ճարտարապետական արվեստն իմ նախասիրած ոլորտներն են եւ, օգտվելով առիթից, շնորհակալությունս եմ բերում Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին, ում վստահությամբ էլ այսօր զբաղված եմ՝ Թբիլիսիի հայկական եկեղեցիների, այստեղ ապրած հայ մեծահարուստների երբեմնի բնակարանների, նրանց կառուցած՝ ճարտարապետական արժեք ունեցող, շենքերի ստեղծման պատմությունների հավաքագրմամբ:

2014-ին ունեցա մենահամերգներ, մասնակցեցի մեր համայնքի համերգներին, այնպես որ, անցնող տարուց բարեկամաբար եմ բաժանվում:

***- Դուք այսօր մասնագիտությամբ չեք աշխատում, Ձեր նոր աշխատանքը Ձեզանից մեծ ժամանակ է խլում: Նման պարագայում դաշնամուրը եւ բեմը որքա՞ն է անհրաժեշտ Ձեզ:***

- Նոր աշխատանքս չի խանգարում իմ ելույթներին, դաշնամուրը մշտապես եղել է իմ կյանքի բաղկացուցիչը: Իմ կարծիքով, համերգային կյանքը շատ կարեւոր է՝ իր ասելիքն ունեցող երաժշտի համար, քանի որ՝ ցույց է տալիս նրա աշխատանքը, ստեղծագործական աճը: Բեմը երաժշտի ինքնաարտահայտման ճանապարհն է:

***- Ձեզ ավելի ռեալիզացված եք զգում իբրեւ ուսուցի՞չ, թե՞ իբրեւ կատարող:***

- Թեպետ ուսուցիչ աշխատելիս, մշտապես, մեծ հաճույք եմ զգացել ու բավականություն, եւ ցանկալի արդյունքներն ընդունել եմ՝ որպես աշխատանքիս վարձատրություն, բայց ավելի սիրում եմ ինձ կատարող զգալ...

Ի դեպ, իմ աշակերտներից Աննա Վարդանովան Վրաստանի հանրապետական մրցույթների դափնեկիր է: Մոսկվայում՝ երաժշտական տարբեր մրցույթների դափնեկիր էր Վիտալի Լոպատինը...

***- Ի՞նչ եք կարծում, Ձեր մարդկային հատկանիշների ձեւավորման հարցում երաժշտությունը դերակատարում ունեցե՞լ է եւ օգնու՞մ է Ձեզ կյանքում...***

- Անշուշտ: Հատկանիշներից, երեւի, ամենակարեւորը կազմակերպվածությունն է: Գործը կամ խոսքը՝ ինչից սկսելու, ինչով ավարտելու կարողությունն ինձ, համոզված եմ, տվել է երաժշտությունը, քանի որ ցանկացած երաժշտական կոմպոզիցիա, ցանկացած մեղեդի կատարյալ է, երբ ունի համաչափ, ներդաշնակ կառուցվածք՝ սկիզբ, ընթացք, ավարտ...

***- Համաձա՞յն եք, որ լավ երաժիշտ լինելու նախապայմանը վերուստ տրված տաղանդն է:***

- Միայն տաղանդով լավ երաժիշտ չես դառնա: Դրա համար անհրաժեշտություն են՝ Աստծուց եկող սերը՝ գործի հանդեպ եւ՝ կատարողի ներքին հարստությունը, այսինքն՝ հուզական կատարման կարողությունը...

***- Նոր տարվանից Եսայի Աբովյանի կյանքում ի՞նչը կսկսվի, եւ ի՞նչը կավարտվի՝ լավ իմաստով:***

- Ունեմ ցանկություն՝ 2015-ին՝ Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակին նվիրված մենահամերգ տալ, կարծում եմ, դա կլինի Սուրբ Էջմիածին եկեղեցում: Մյուս ամեն ինչ, թող Աստծո կամքով, իմ կյանքում շարունակվի իր հունով...

***- Գիտենք, որ սիրում եք լուսանկարել, մասնակցում եք լուսանկարչական ցուցահանդեսների, նաեւ ասում են, որ վարպետ խոհարար եք, ինչո՞վ են այդ զբաղմունքները Ձեզ հաճելի:***

- Երեւի նրանով, որ դրանք էլ արվեստ են եւ պահանջում են ստեղծագործել: Լուսանկարչությունը ստիպում է նկատել եւ ցույց տալ բնության գեղեցիկ անկյուններն ու պահերը... խոհարարությունը՝ հաճախ քո երեւակայությամբ ստեղծված ուտեստով, հաճույք է պատճառում սեղանակցիդ... Այդ ծառայություններից դու էլ ես երջանկանում:

***- Դուք հաճախ ուխտագնացության եք գնում Հայաստանի ու Վրաստանի եկեղեցիներ ու պատմական վայրեր, դա զուտ տեղանքը ճանաչելու հետաքրքրասիրության բավարարո՞ւմ է...***

- Մեծերն ասել են՝ «Ճարտարապետությունը քարի երաժշտությունն է, իսկ երաժշտությունը՝ կենդանի ճարտարապետություն»: Պատմական հուշարձաններ եւ եկեղեցիներ շրջագայելու սիրուս համար էլ, նորից ու նորից, պարտական եմ երաժշտությանը, ինձ համար այդ երկուսը լրացնում են իրար...

***- Ձեր օրվա մեջ կա՞ հատված՝ աղոթքի համար:***

- Այո, անպայման, եւ իմ հավատքն առ Աստված հեռու է ցուցադրականությունից: Ինձ թվում է՝ աղոթելու պահանջը ծնվեց հենց եկեղեցիներն ուխտագնացության գնալիս... Այդ հեռավոր շրջագայությունների ժամանակ, հաճախ, բախվում ես դժվարանցելի կամ բարձրադիր տեղանքի, նման պահերի ես միշտ զգացել եմ Աստծո զորակցությունը եւ՝ անվնաս հաղթահարել հանդիպած դժվարությունները:

***- Ի՞նչ կցանկանաք Նոր տարում անձամբ Ձեզ եւ Ձեր ընտանիքին:***

- Այն, առանց ինչի մարդ չի կարող լիարժեք կյանքով ապրել՝ առողջություն, բարօրություն, երջանկություն:

Ուզում եմ շնորհակալությունս հայտնել «Վրաստան» թերթին՝ հոբելյանս հիշելու համար եւ շնորհավորել «Վրաստան» թերթի ողջ աշխատակազմի Նոր տարին:

Ձեզ քաջառողջություն, նոր հաջողություններ ու ձեռքբերումներ, թանկագի՛ն բարեկամներ:

Շնորհավոր Վրաստանում բնակվող բոլոր ժողովուրդների Նոր տարին:

Սեր, հույս ու հավատ բոլորիս:

*Զրուցեց*
***ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՄԵՂԱՎՈՐԸ ԿԴԱՏՎԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, հունվարի 12-ին Գյումրիի Մյասնիկյան փողոցի 188-ում հայտնաբերվեցին Ավետիսյանների ընտանիքի 6 անդամների դիերը: Ավետիսյանների ընտանիքից ողջ էր մնացել 6 ամսական փոքրիկը՝ Սերյոժա Ավետիսյանը, ով կտրող-ծակող գործիքից ստացած վնասվածքներով տեղափոխվել էր բժշկական կենտրոն, այնուհետեւ՝ յոթ օր հետո մահացել: Կասկածյալ, Գյումրիի 102-րդ ռուսական բազայի շարքային 19-ամյա Վալերի Պերմյակովին ռուս սահմանապահները հայտնաբերել էին հայ-թուրքական սահմանը հատելու փորձ կատարելիս եւ հանձնել 102-րդ ռուսական բազայի հրամանատարությանը:*

Հայաստանի քննչական կոմիտեի քննիչները Վալերի Պերմյակովին մեղադրանք են առաջադրել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ երկու եւ ավելի անձանց դիտավորյալ սպանության համար: Վալերի Պերմյակովն ընդունել է առաջադրված մեղադրանքը:

Հունվարի 21-ին կայացավ Գյումրիում Ավետիսյանների ընտանիքի սպանդից ողջ մնացած եւ հունվարի 19-ին Երեւանում մահացած վեց ամսական Սերյոժա Ավետիսյանի հուղարկավորությունը:

Գյումրիի Սբ. Նշան եկեղեցում անցկացվեց հոգեհանգստի արարողություն, որին ներկա էին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը, առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը, Հայաստանի ԱԺ պատգամավորներ, Շիրակի մարզի եւ Գյումրի քաղաքի իշխանությունների ներկայացուցիչներ:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի միջեւ հեռախոսազրույց է տեղի ունեցել: Ռուսաստանի նախագահը եւս մեկ անգամ ցավակցություն է հայտնել Գյումրիում տեղի ունեցած ողբերգության զոհերի հարազատներին եւ ամբողջ հայ ժողովրդին: Վլադիմիր Պուտինը վստահություն է հայտնել, որ կիրականացվի համակողմանի արդյունավետ քննություն, եւ մեղավորները կկրեն օրենքով նախատեսված պատիժը:

Հեռախոսազրույցը կայացել է ռուսական կողմի նախաձեռնությամբ:

Երկու երկրների իրավապահների համատեղ գործունեության, տեղի ունեցած ողբերգության հանգամանքների բացահայտման անհրաժեշտությունն ընդգծվեց նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հանձնարարությամբ Հայաստան ժամանած Ռուսաստանի Դաշնության քննչական կոմիտեի նախագահ Ալեքսանդր Բաստրիկինի հանդիպմանը: Ալեքսանդր Բաստրիկինը վստահություն է հայտնել, որ այս գործով Հայաստանում իրականացվելիք հրապարակային դատական քննությունը կդառնա արդարության եւ արդարադատության հասնելու երկու կողմերի ձգտման վկայությունը:

Ռուսաստանի քննչական կոմիտեի նախագահ Ալեքսանդր Բաստրիկինը եւ Հայաստանի քննչական կոմիտեի ղեկավար Աղվան Հովսեփյանը պայմանավորվել են համատեղ հետաքննել Գյումրիում ընտանիքի յոթ անդամների սպանությունը:

Քաղաքագիտության դոկտոր, Ռուսաստանի Փաստաբանների միության առաջին փոխնախագահ Ալեքսեյ Բինեցկին, ռուսաստանյան РБК հեռուստաալիքի «Օբոզրեւատել» հաղորդման շրջանակներում, անդրադարձել է Գյումրիում ընտանիքի ցնցող սպանության իրավաբանական ասպեկտին:

Նրա խոսքերով, այն, ինչ տեղի ունեցավ Հայաստանում, անկասկած լուրջ հարված է երկու պետությունների մերձեցմանը, որը վերջին տարիներին ավելի էր նկատվում: «Դա շատ լուրջ հարված է, չեմ ուզում ասել եղբայրական, բայց, համենայնդեպս, միեւնույն կրոնի հետեւորդ երկու պետությունների փոխհարաբերություններին:

Իրավաբանորեն բացարձակ ճիշտ է, քանի որ զինծառայողը լքել է բազայի տարածքը, նա դադարում է հատուկ սուբյեկտ լինել, եւ քրեական հանցագործություն է կատարել այլ պետության տարածքում: Գյումրիում ռուսական ռազմաբազայի տարածքը, ըստ համապատասխան համաձայնագրի, Ռուսաստանի Դաշնության տարածք է այնքան ժամանակ, քանի դեռ գործում է այդ համաձայնագիրը: Բայց եւս մեկ անգամ կրկնում եմ, նա հանցագործությունը կատարել է այդ տարածքից դուրս: Խոսքն այն մասին չէ, որ Ռուսաստանն իր քաղաքացիներին չի հանձնում այլ երկրների արդարադատությանը: Այս դեպքում Հայաստանի դատախազությունն իսկապես իրավունք ունի եւ պետք է հետաքննություն անցկացնի, իսկ ռուսական ռազմական քննիչները՝ զինվորական գլխավոր դատախազության հետ միասին, իրավունք ունեն խնդրել եւ մասնակցել այդ հետաքննությանը: Եվ, համապատասխանաբար, այդ հանցագործությունը պետք է քննեն ու նրան դատապարտեն Հայաստանի մարմինները՝ ռուսական իրավապահ մարմինների մասնակցությամբ՝ զինվորական դատախազության գլխավորությամբ»,- հայտարարել է քաղաքագիտության դոկտոր, Ռուսաստանի Փաստաբանների միության առաջին փոխնախագահ Ալեքսեյ Բինեցկին:

## ՏԱՐԲԵՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԽՈՉԸՆԴՈՏԻ ՀԱՅԱՍՏԱՆ-ՆԱՏՕ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

*Հունվարի 15-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապատուրային:*



Հանդիպմանը երկուստեք գոհունակությամբ ընդգծեցին, որ Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները զարգանում են բնականոն, եւ երկուստեք առկա է ձեւավորված քաղաքական արդյունավետ երկխոսությունն ու գործընկերության բոլոր բնագավառներում համագործակցությունը շարունակելու եւ խորացնելու ցանկություն:

Հանդիպման սկզբում Ջեյմս Ապատուրայը երախտագիտություն է հայտնել Կոսովոյում եւ Աֆղանստանում ՆԱՏՕ-ի ղեկավարած խաղաղության հաստատման գործողություններին Հայաստանի մասնակցության եւ մինչ այժմ ունեցած ներդրման համար: Դաշինքի հետ հետագա համագործակցության խորացման առումով երկու կողմերը կարեւորեցին Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների 2014-2016թթ. նորացված ծրագիրը:

Հանդիպման ընթացքում ՀՀ նախագահը եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչն անդրադարձել են նաեւ տարածաշրջանի խնդիրներին, ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին եւ առկա մտահոգություններին, միջազգային արդի մարտահրավերներին ու դրանց դիմակայման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներին:

Այս փաստը, որ Հայաստանը հանդիսանում է Հավաքական անվտանգության պայմանագրի (ՀԱՊԿ) կամ Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) անդամ, չի խոչընդոտում ՆԱՏՕ-ի հետ նրա համագործակցությունը: Այս մասին հանդիպմանը հայտարարել է Ջեյմս Ապատուրայը:

«Մենք չենք կրճատել մեր ծրագրերը, ավելին՝ ավելացրել ենք համագործակցությունը, որը համապատասխանում էր մեր երկարաժամկետ ծրագրերին: Շատ նոր ծրագրեր ենք նախատեսում, որոնք տեղավորվում են Անհատական գործողությունների ծրագրում»,- նշել է Ապատուրայը:

## ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵՑ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ



*Հայաստանի պատվիրակությունը՝ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորությամբ, հունվարի 20-ին մասնակցել է Բրյուսելում տեղի ունեցած Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության խորհրդի 15-րդ նիստին:*

Նիստում Եվրոպական միության պատվիրակությունը գլխավորել են ԵՄ Խորհրդի նախագահությունը ներկայացնող Լատվիայի արտաքին գործերի նախարար Էդգարս Ռինկեւիչը եւ Եվրոպական հանձնաժողովի Եվրոպական հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման հարցերով հանձնակատար Յոհանես Հանը:

Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության խորհրդի 15-րդ նիստին հանգամանալից քննարկվել են Հայաստան-ԵՄ համագործակցության հետագա զարգացման նպատակով ձեռնարկվելիք քայլերը՝ քաղաքական երկխոսության, հարաբերությունների ապագա իրավական հիմքի, շարժունակության, մարդու իրավունքների, տնտեսական բարեփոխումների, Հայաստանին ԵՄ աջակցության հարցերը:

Էդվարդ Նալբանդյանը կարեւորել է Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրին կից Արձանագրության ուժի մեջ մտնելը, որով Հայաստանը կարող է մասնակցել ԵՄ ծրագրերի լայն շրջանակի եւ համագործակցելու ԵՄ տարբեր գործակալությունների հետ:

## ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆԸ

*Հայաստանի կառավարությունը եւ Հայաստանում ԵՄ պատվիրակությունը հունվարի 16-ին կազմակերպեցին ԵՄ-Հայաստան ֆինանսավորման ութ համաձայնագրերի մեկնարկի արարողություն:*

Աջակցության նոր փաթեթը նպատակաուղղված է օժանդակելու Հայաստանի զարգացմանը եւ բարեփոխումներին: Նոր գործիքներով նախատեսվում է 77.5 մլն եվրոյի (44 մլրդ դրամ) հատկացում:

Ութ համաձայնագրերը կոչված են խթանելու առաջընթացը երկկողմ համագործակցության որոշ հիմնական ոլորտներում. գյուղատնտեսությունից մինչեւ տարածքային զարգացում՝ ԵՄ ծրագրերի իրագործման համար կարողությունների զարգացման միջոցով, աջակցելու միգրացիային եւ սահմանների համալիր կառավարմանը, հակակոռուպցիոն եւ քաղաքացիական ծառայության բարեփոխումներին, ջրամատակարարման բարելավմանը, Երեւանի մետրոյի վերակառուցմանը եւ միջուկային անվտանգությանը:

Արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը եւ Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիստեան: Ներկա էին կառավարության շահառու մարմինների, ԵՄ անդամ պետությունների եւ Հայաստանում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Աջակցության այս նոր փաթեթը վերահաստատում է Հայաստանի եւ ԵՄ-ի հանձնառությունը՝ երկկողմ համագործակցությունը ամրապնդելու ուղղությամբ:

### ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ ՉԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԻ

*Վրաստանի ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային դեպարտամենտից Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարությանը տրամադրած տեղեկատվության համաձայն՝ առատ տեղումների պատճառով բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար փակ են եղել Ստեփանծմինդա-Լարս, Նինոծմինդա-Բավրա ավտոճանապարհները: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ Հայաստանի ֆինանսների նախարարությունը տեղեկացնում է. Հայաստանի մաքսային սահմանով ապրանքներ եւ ավտոմեքենաներ տեղափոխած այն անձինք, ովքեր նշված ավտոճանապարհների փակ լինելու պատճառով չեն կարողացել կատարել իրենց մաքսային պարտավորությունները եւ այդ կապակցությամբ պարտավորության կատարման ժամկետում դիմել են Հայաստանի մաքսային մարմիններին, նրանց նկատմամբ վարչական պատասխանատվություն չի կիրառվի, իսկ սկսած վարչական վարույթները կկարճվեն:*

### ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*Մարդասիրական օգնության կարգով 2014թ. հունվար-նոյեմբերին Հայաստան է ներմուծվել 5 հազար 78.2 տոննա ապրանք, որի ընդհանուր արժեքը կազմել է 19.8 մլրդ դրամ կամ 48.3 մլն դոլար: Ստացված օգնության 39.2 տոկոսը կազմել են քիմիայի եւ դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը: Մարդասիրական օգնության կարգով ստացված ապրանքների 29.8 տոկոսը Հայաստան է ուղարկվել Եվրամիության երկրներից, ընդ որում 12.3 տոկոսը՝ Գերմանիայից: ԱՄՆ-ից Հայաստան է ուղարկվել ընդհանուր ապրանքների 21.1 տոկոսը, Չինաստանից՝ 10.9 տոկոսը, Ավստրալիայից՝ 14 տոկոսը, Միացյալ Թագավորությունից՝ 4.7 տոկոսը, Ֆրանսիայից՝ 4.1 տոկոսը: Այլ երկրներից ստացված ապրանքների կշիռը ընդհանուր ցուցանիշում չի գերազանցում 3 տոկոսը:*

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄ՝ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ

*Վատիկանում ավարտվում է Սրբերի միաբանության ժողովը, որի ժամանակ անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվել Հռոմի պապի հայտարարության համար, որով նա կհայտնի, թե ով է ստանալու Եկեղեցու նոր եկեղեցական դոկտորի կոչումը: Այս մասին հայտնում է Info Catolica կայքը՝ նշելով, որ Կաթոլիկ եկեղեցու այդ կոչմանը, որը շնորհվում է վաստակավոր աստվածաբաններին, արժանանալու է Հայ եկեղեցու վարդապետ Սուրբ Գրիգոր Նարեկացին: 10-րդ դարում ապրած հայ վանականին կաթոլիկ աշխարհում անվանում են հայերի Սան Ագուստին, իհարկե, ոչ թե նրա ստեղծագործությունների քանակի, այլ այն ազդեցության համար, որը դրանք թողել են հավատացյալների շրջանում:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈՒՆՎԱՐ

*25.01.2015. Բարեկենդան Առաջավորաց Պահոց*

Առաջավորաց պահոց շրջանը հատուկ է միայն Հայ եկեղեցուն: Սկսվում է Մեծ պահքից երեք շաբաթ առաջ:

Համաձայն Հայ եկեղեցու վարդապետների, առաջավորաց պահքը հաստատել է Սբ. Գրիգոր Լուսավորիչը: Առաջավորաց պահքը թյուրիմացաբար անվանվել է նաեւ Սուրբ Սարգսի պահք, քանի որ առաջավորաց պահքին հաջորդող շաբաթ օրը Հայ եկեղեցին տոնում է Սբ. Սարգսի տոնը:

ԳՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

## «ԱԿԱՆՋԱԲԱՐՁ»




***Հայ ընթերցողի սեղանին է վրաց ժամանակակից գրող, դրամատուրգ, սցենարիստ, Իրակլի Սամսոնաձեի «Ականջաբարձ» վեպը:***

«Վրացական արդի գրականության լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ Իրակլի Սամսոնաձեի այս վեպը հետսովետական, այսպես կոչված, անցումային տարիների դժվարին ժամանակաշրջանն է վկայագրում:

Բարոյահոգեբանական եւ արժեհամակարգային աղճատված իրականության մեջ՝ Սամսոնաձեն Մարդ, Քաղաքացի, Մտավորական մնալու դժվարին, բարձր առաքելության խնդիրն է դնում»,- ասված է գրքի անոտացիայում:

Վեպի թարգմանությունը՝ վրացերենից հայերեն իրականացրել է ճանաչված բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը: «Ականջաբարձը» Բոստանջյանի՝ հայ-վրաց գրական կապերի ամրապնդման գործում ներդրվող զգալի ավանդի արտահայտությունն է: Չշեղվելով թարգմանական արվեստի ուրույն սկզբունքներից՝ Բոստանջյանը նորից փորձում է, հավատարիմ մնալով վիպագրի գաղափարական ու գեղագիտական նախասիրություններին, հայ ընթերցողին լիարժեք հասցնել վրացի հեղինակին հուզող վերոնշյալ համամարդկային խնդիրները:

«Ականջաբարձը» լույս է տեսել Երեւանում, «Անտարես» հրատարակչության կողմից, «Օտար գիր» մատենաշարով, Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության աջակցությամբ:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱԼՅԱՆ*

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

## ՊԱՐԳԵՎ՝ «ՕՍԿԱՐԻ» ՀԱՎԱԿՆՈՐԴ ՖԻԼՄԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

***Վրաց կինոռեժիսորներ Զազա Ուրուշաձեն եւ Գիորգի Օվաշվիլին միջազգային ասպարեզում վրացական կինոյի ժողովրդականացման գործում ներդրած ավանդի համար պարգեւատրվեցին Վրաստանի մշակույթի նախարարության բարձրագույն պարգեւով, արվեստի քուրմով:***



Պարգեւը ռեժիսորների հատուկ ընդունելությանը հանձնեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ մշակույթի նախարար Մամուկա Գիորգաձեն:

Նշենք, որ «Օսկարին» ներկայացված 83 երկրների ռեժիսորների գործերից հեղինակավոր ժյուրին առանձնացրել էր 9 ֆիլմ, այդ թվում՝ վրաց ռեժիսորներ Զազա Ուրուշաձեի «Մանդարին» եւ Գիորգի Օվաշվիլու «Եգիպտացորենի կղզի» ֆիլմերը: Սա առաջին դեպքն է, երբ օտարերկրյա ֆիլմերից բարձր պարգեւին միաժամանակ հավակնել են վրացական երկու ֆիլմեր:

Հունվարի 15-ին տարածվեց տեղեկատվություն, ըստ որի Զազա Ուրուշաձեի «Մանդարինը» այլ ֆիլմերի թվում հանդիսանում է կինոպարգեւի հավակնորդ:

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԻԼԻԱ ԿԱՐՏՈԶԻԱՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Հունվարի 18-ին Դավիթ Աղմաշենեբելու մենաստանի տարածքում մեծ հանդիսավորությամբ հողին հանձնվեց Norman Atlantic լաստանավի վրա դեկտեմբերի 28-ին բռնկված հրդեհի արդյունքում զոհված Մցխեթայի մենաստանի Ծայրագույն վարդապետ Իլիա Կարտոզիայի դին:

Ինչպես պատմեցին լաստանավի ուղեւորները, Իլիա Կարտոզիան հրդեհի ժամանակ մարդկանց օգնում էր տեղափոխվել փրկարար նավակներ, նա այդ նավակում իր տեղը զիջեց երեխայով մի կնոջ, իսկ ինքը չհասցրեց փրկվել:

Ծայրագույն վարդապետ Իլիա Կարտոզիայի հոգեհանգստի արարողությունն անցկացվեց Թբիլիսիի Սուրբ Երրորդության Մայր Տաճարում եւ Սվետիցխովելիի տաճարում: Արարողությանը ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, պաշտոնատար այլ անձինք:

ՀԻՇԱՏԱԿ

## ՍԱԼԱՎԱԹ ԱՐՈՅԱՆ



Նինոծմինդայի հասարակայնությունը, հունվարյան այդ սառնաշունչ օրը հրաժեշտ տվեց կյանքից անժամանակ հեռացած Սալավաթ Արոյանին՝ ճանաչված մտավորականին, շրջանի երեւելի գործիչներից մեկին:

Սալավաթ Վազգենի Արոյանը ծնվել է 1949 թվականին Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) շրջանի Հեշտիա գյուղում, կոլտնտեսականի ընտանիքում: Տեղի միջնակարգն ավարտելուց հետո նույն տարում էլ ընդունվել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

Բուհն ավարտելուց հետո ստանում է պատմաբանի որակավորում եւ աշխատում է մանկավարժ հայրենի Հեշտիայի թիվ 2 միջնակարգ դպրոցում: Ապա աշխատել է կոմերիտական եւ կոմկուսի շրջկոմներում, շրջգործկոմում:

1992-1993 թվականներին Ս.Արոյանը վարել է Նինոծմինդայի շրջանի վարչության նախագահի պաշտոնը:

1993 թվականից Ս.Արոյանի գործունեության ոլորտը տեղափոխվում է այլ բնագավառ, նշանակվում է Նինոծմինդայի մաքսային կետի պետ, ուր աշխատում է մինչեւ 2001 թվականը:

Որտեղ էլ որ աշխատել է Ս.Արոյանը, ցուցաբերել է մեծ նվիրում ու պատասխանատվություն դեպի գործը, պարտականությունների անթերի կատարումը: Նա հեղինակ է «Բեկորներ Մշո Ջոջ քարի» (պատմաազգագրական ուսումնասիրություն) գրքի, որը լայն ընդունելություն գտավ ընթերցողների շրջանում: Սիրով ու նվիրումով գրված հայրենասիրական գիրքը լուսաբանում է Էրզրումի նահանգից եւ Մուշից 1829-30 թվականներին Ջավախքում վերաբնակեցվածների տնտեսական, հասարակական-մշակութային կյանքը, նրանց հին ու նոր բնակավայրերի պատմությունը, ազգագրությունը:

1997 թվականին Ս.Արոյանը պաշտպանել է դոկտորական թեզ:

Ս.Արոյանի լուսավոր հիշատակը միշտ վառ կմնա հարազատների, գործընկերների, նրան բոլոր ճանաչողների սրտերում:

*Մի խումբ ընկերներ*

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Քաղաք Ռուսաստանում: 8.Այնպիսի (արեւմտ.): 9.ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար՝ Պան Գի ...: 10.Երգչուհի Այրոնա ...: 13.Որեւէ բանի ընդհանուր քանակություն: 18.Հնդիկ իշխանի տիտղոս: 19.Խատուտիկ, պուտպուտ: 22.Մարզ Հայաստանի հյուսիս-արեւմուտքում: 23.Խաղաղության խորհրդանիշ թռչուն: 28.Վաղեմի, հին: 29.Ճգնել: 32.Պարգեւ, ընծա: 33.Բարձր ազնվականության ժառանգական տիտղոս Անգլիայում: 34.Ապավեն, պաշտպան: 37.Օժանդակ բայ: 39.Գործվածքի տեսակ: 41.Նորվեգացի ճանապարհորդ, հետախույզ ... Ամունդսեն: 44.Կտորի «մշակումը» նախքան կարելը: 46.Կնոջ անուն: 47.Մշակութային լանդշաֆտ կենտրոնական Իտալիայում ... դ' Օրչա: 49.Ձկան տեսակ: 50.Խմիչքեղենը՝ տնօրինող, լցնող ու խմողներին մատուցող սպասավոր: 52.Ցաք ու ...: 54.Նստաշրջան: 55.Փոքր առեւտրական քաղաք Կենիայում, Նարո ...: 56.Ֆրանսիացի գրող դը Մոպասանի անունը: 57.Խակ, չհասած: 58.Վրացի պոպ երգչուհի ... Ծուրծումիա:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Վրաց էստրադային երգչուհի, Վրաստանի ժողովրդական արտիստ ... Բրեգվաձե: 2.Վրաց շախմատիստուհի, աշխարհի չեմպիոնուհի ... Գափրինդաշվիլի: 3.Լեռ Վրաստանում, Կովկասյան բարձրավանդակի վրա: 4.Չափածո ստեղծագործության հնչյունային ձեւավորման հիմնական կողմերից մեկը: 5.Հունական այբուբենի տառ: 6.Ճապոնացի ռեժիսոր, սցենարիստ եւ պրոդյուսեր ... Կուրոսավա: 11.Լատվիական ծագումով ռուսաստանցի հեռուստահաղորդավար Վալդիս ...: 12....-Դամ դե Պարի: 14.Ջկնորսի ցանց: 15.Ֆրանսիացի դերասանուհի Իզաբել ...: 16.Հրանոթի փամփուշտ: 17.Ռուսական ավտոմեքենա: 20.Իտալական ռեստորան Թբիլիսիում: 21.Ծագումով Իռլանդիայից, բրիտանական հանրաճանաչ բանաստեղծ, գրող Օսկար ...: 24.Քաղաք Թուրքիայի արեւելյան մասում՝ պատմական Արեւմտյան Հայաստանում: 25.Նիհար, լղար: 26.Իսպանացի ֆուտբոլի դարպասապահ ... Կասիյաս: 27.Գյուղ Հայաստանում, Լոռու մարզում: 30.Ամերիկացի բռնցքամարտիկ Կասիուս ...: 31.Տեսնում են քնի մեջ: 35.Սեղանատամ: 36.Ղազախ լուսավորիչ-բանաստեղծ, ղազախական գրականության հիմնադիր ... Կունանբաեւ: 37.Թիկունքի կողմը: 38.Քիմիայի մասնագետ: 40.Հին հունական դիցաբանությունում տիտան, որն իր ուսերին պահում էր երկնակամարը: 42.Արու զավակ: 43.Մերձբալթյան հանրապետություն: 44.Ստեփան Զորյանի պատմվածքներից «... գիշեր»: 45.«Ալ Քաիդա» ահաբեկչական կազմակերպության հիմնադիրներից ... Բեն Լադեն: 48.Քրիստոնեական աստվածապաշտության մեջ ընդունված է յուրաքանչյուր աղոթքի վերջում: 51.Ահա՝ ըստ գյումրեցու: 52.Երկկճղակավոր կենդանի: 53.Ամերիկյան ավտոմեքենա:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ N 99-100 ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Գնդակ: 6.Հույս: 9.Լուծում: 10.Պատգամ: 12.Վերջ: 14.Նկատելի: 18.Սխտոր: 20.Քառս: 21.Ալյասկա: 23.Լալա: 25.Ուլունք: 28.Էդգար: 30.Դալայ: 33.Տիար: 35.Լնդախտ: 36.Ալեհեր: 37.Լիրա: 38.Արմինե: 41.Որակ: 43.Տաս: 45.Ուրալ: 46.Ադաշ: 48.Կտոր: 51.Ճավա: 54.Լատ: 57.Սալ: 58.Հակոբ: 60.Երիկամ: 61.Առք: 62.Սպորտ: 63.Սեր:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Նոտա: 3.Ավան: 4.Բու: 5.Դուել: 7.Ուտեստ: 8.Ապրեք: 11.Մկկալ: 13.Ջուր: 15.Եսաուլ: 16.Իսկույն: 17.Օսլա: 19.Խալ: 22.Լադա: 24.Արտել: 26.Ուսադիր: 27.Քրտնել: 29.Գրետա: 31.Արմատ: 32.Ալմաստ: 34.Իրինա: 39.Մուրճ: 40.Նարվա: 42.Կալա: 44.Ակրոբատ: 47.Շշուկ: 49.Խորեն: 50.Ալժիր: 52.Ասպար: 53.Ալանի: 55.Տիաս: 56.Դուքս: 59.Ամպ:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445